ՀՈՒՇԵՐ

ԱԿԱՆԱՎՈՐ ԿՈՄՈՒՆԻՍՏ ԱՐՇԱՎԻՐ ՄԵԼԻՔՅԱՆԻ ՄԱՍԻՆ
(1912—1920 թթ.)

Կ. ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Արշավիր Մելիքյանը XX դարի առաջին կեսի ամենաականավոր հասարակական դեմքերից մեկն էր, կուսակցության անդամ էր 1906 թվականից։

Ա. Մելիքյանը միջնակարգ կրթությունն ստացել է Երևանի Տղայոց գիմնազիայում, որն ավարտելով՝ մեկնել է Խարկով և ընդունվել պետական համալսարանը, եռանդուն մասնակցել ուսանողական հեղափոխական շարժումներին, ապա ձերբակալվել ու արտաքսվել Խարկովից՝ զրկվելով համալսարանական քաղաքներում ապրելու իրավունքից։

Ցարական իշխանության հետապնդումներից ստիպված, նա 1903 թ. մեկնում է Շվեյցարիա, սովորում նախ Ցյուրիխի համալսարանում, ապա՝ ժնևի, հետո անցնում է Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա և այլուր։

Շվեյցարիայում նա, իբրև բոլշևիկ, աշխատում է Ցյուրիխի բոլշևիկյան կազմակերպությունում և եռանդուն գործունեություն ծավալում ռուս էմիգրանտների շրջանում։ Այստեղ նա ծանոթանում է Վ. Ի. Լենինի հետ և աշխատում նրա անմիջական ղեկավարությամբ։

Ավելորդ եմ համարում գրել արտասահմանում Ա. Մելիքյանի բոլշևիկյան գործունեության մասին։ Այդ ամենը ամսագրի ընթերցողը կգտնի նրա կենսագրության մեջ։ Մեր նպատակն է՝ նկարագրել Ա. Մելիքյանի հարաբերություններն իր շրջապատի, մանավանդ աշակերտ-ուսանողության հետ՝ Երևանում։

Արշ. Մելիքյանը վերադառնում է Երևան 1910 թ. և ժամանակավորապես տեղավորվում իր մորաքրոջ՝ Սոֆիա Մելիք-Օհանջանյանի տանը՝ Սպանդարյան (նախ. Ցարսկի) փող. № 3։ Հին ընկերներից, ծանոթներից հատուկենտ մարդ էր մնացել Երևանում։ Դրանցից հիշենք Ա-Դո-ին (Հովհաննես Տեր-Սարտիրոսյան) և Վարդան Բաբայանին։ Արշավիրը մարդամոտ բնավորություն ուներ. նա միշտ շրջապատված էր լինում երիտասարդներով։ Այդ նրա ներքին պահանջն էր. չէ՞ որ ինքն էլ հազիվ 32—33 տարեկան էր։

Ա. Մելիքյանի կյանքը հաջող ընթացք կունենար, եթե նա կարողանար որևէ միջնակարգ դպրոցում համապատասխան դասեր ստանալ և նյութականը քիչ թե շատ ապահովել։ Ստեղծված պայմաններում այդ դժվար էր։ Իբրև փորձված հեղափոխական, նա արդեն հասկացել էր, որ գտնվում է ոստիկանական հսկողության ներքո, տեսնում էր, թե ինչպես զրոսանքի դուրս գալիս, որոշ հեռավորության վրա, նրան հետևում էին լրտեսները...

1911 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Ա. Մելիքյանին ընկերները հայտնում են, որ Երևանի Տղայոց գիմնազիայում ազատ դասեր կան ֆրանսերեն և

դերմաներեն լեզուներից, իսկ Գայանյան աղջիկների դպրոցում՝ պատմությունից։ Նա դիմում է գիմնազիայի դիրեկտորին և մի գրություն էլ ուղղում Գայանյան դպրոցի տեսչին։ Դիմումների պատասխանները երկար սպասեցնել չեն տալիս։ Դրանք բացասական էին միևնույն պատճառաբանությամբ՝ «մանկավարժական խորհուրդները որոշել են աղատ դասերն իրենց դասատուների միջև բաշխել»։ Նա իսկույն հասկանում է, որ այդ պատասխանների հեղինակը միևնույն հիմնարկությունն է՝ ժանդարմերիան։ Հետևաբար, հալածանքն արդեն սկսվել էր։

Այդ օրերին, մեր ետճաշյա զբոսանքի ժամանակ, նա պատմեց ինձ իր անհաջողությունների մասին և խնդրեց տանը չասել, որովհետև ինքը որոշել է հեռանալ Ռուսաստանից։

Ա. Մելիքյանի մտահոգությունների մասին ես պատմեցի հորեղբորս, որը բարձր դիրք էր գրավում Երևանում և նահանգապետի հետ լավ հարաբերության մեջ էր։ Նա պատվիրեց ճաշի հրավիրել Ա. Մելիքյանին։ Արշավիրը հետևյալ օրը մեզ մոտ ճաշեց։ Հորեղբայրս ծանոթանալով իրադրությանը, խոստացավ հարթել ծագած դժվարությունը և հնարավորություն ստեղծել նրա մանկավարժական գործունեության համար։ Մի երկու օր անց, Արշավիրը հրավեր ստացավ թե՛ Տղայոց գիմնազիայից և թե՛ Գայանյան դպրոցից։ Նա նախընտրեց Գայանյան դպրոցը։

1911/12 ուս. տարում Ա. Մելիքյանը կարող էր իրեն տնտեսապես ապահով զգալ, ուստի նա իր համար առանձին սենյակ վարձեց Սվերդլովի (նախկին Բեբուտովսկայա) փողոցի վրա։

Նյութական դրությունը փոքր ինչ բարելավելուց հետո, Արշավիրը ընդլայնում է նաև իր ծանոթների շրջանը, աստիճանաբար սկսում է աշխատանքներ տանել երիտասարդության՝ աշակերտ-աշակերտուհիների շրջանում։ Նրա շուրջն են հավաքվում ինչպես գիմնազիայի, թեմական դպրոցի, այնպես էլ աղջիկների Գայանյան և Ալեքսանդրյան դպրոցների աշակերտ-աշակերտուհիները։

Այդ աշակերտների շրջանից են դուրս եկել 1916—1917 թվականների աշքի ընկնող սպարտակյան երիտասարդությունը՝ Սաշա Իսահակյանը, Ղուկաս Ղուկասյանը, Աղասի Խանջյանը, Արմենակ Բուդաղյանը, Պողոսյանը, ապա Մ. Ենգիբարյանը, Հ. Աղիզյանը, Հ. Աղաջանյանը, Գուրգեն Մելիք-Օհանջանյանը և շատ ուրիշներ։ Վերջինները միշտ նրա հետ էին լինում, թե՛ տանը, թե՛ զբոսանքի ժամանակ։

Արդեն ստեղծվել էին մարքսիստական խմբակներ։ Այդ խմբակներում Արշավիրը, շատ հաճախ, զրույցներ էր ունենում, զեկուցումներ կարդում, գրքեր հանձնարարում, զեկուցման համար թեմաներ բաշխում, ապա նրանց զեկուցումները քննարկման ենթարկում և այլն։

Ա. Մելիքյանի զրույցները, հրապարակային զեկուցումներն ու դասախոսությունները կատարյալ դարբնոց էին մարքսիստ երիտասարդության համար։ Նրա հետ հանդիպում ունենալուց հետո՝ ունկնդիրները ցրվում էին հեղափոխական տրամադրությամբ, մարքսիստական լիցք ստացած։ Երիտասարդները խտացնում էին իրենց շարքերը։

Ա. Մելիքյանի խոսքն ու զրույցը երիտասարդության հետ ոչ միշտ էր տեսական բնույթ ու բովանդակություն ունենում։ Նա հաճախ հետաքրքրական հիշողություններ էր պատմում ոչ միայն Գ. Վ. Պլեխանովի, Վ. Ի. Լենինի,

Ա. Վ. Լունաչարսկու և ուրիշ ռուս ականավոր հեղափոխականների, այլև ֆրանսիացի, գերմանացի մեծանուն հեղափոխական լիդերների՝ Ժ. Ժորեսի, Ա. Բեբելի, Կ. Լիբկնեխտի, Ռ. Լյուքսեմբուրգի և այլոց մասին։ Մեկի մասին պատմելիս՝ նա աշխատում էր նմանվել նրան, ընդօրինակել նրա կեցվածքը ելույթի ժամանակ, վերարտադրել հռետորի խոսելու ձևերն ու խոսքի շեշտերը և այդ ամենն այնպիսի հմտությամբ, որ ունկնդիրները պարզ պատկերացնում էին այս կամ այն հեղափոխական ականավոր գործչին, նրա դավանած սկզբունքներն և ուղղությունը։ Այսպիսի զրույցները կենդանի պատկերների տպավորություն էին թողնում։ Արշավիրը հատուկ սիրով էր պատմում Գ. Պլեխանովի, Վ. Լենինի զեկուցումների ու ելույթների և մասնավորապես Ժ. Ժորեսի փոթորկալի միտինգային ելույթների մասին։

Ա. Մելիքյանի զրույցներում մի առանձին ցիկլ էին կազմում եվրոպական տարբեր երկրների պրոլետարիատի հեղափոխական պայքարի ձևերը, բանվորների նիստ ու կացը, ազգային բնավորության առանձնահատկությունները։

Այսպիսով, երիտասարդությունը նրանից սովորում էր մարքսիզմ-լենինիզմի տեսությունը, պրակտիկան, ծանոթանում էր բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի առաջնորդներին և այլն։

1913 թ. Ա. Մելիքյանն սկսում է իր իսկ խմբագրությամբ հրատարակել «Խոսք» թերթը։ Բացի քաղաքական հոդվածներից, միջազգային իրադարձությունների վերլուծությունից և առօրյա հրատապ հարցերի լուսաբանությունից այդտեղ խմբագրի հեղինակությամբ լույս էին տեսնում շատ սուր, ջախջախիչ գրախոսականներ զանազան հրատարակությունների վերաբերյալ։ Առանձնապես հիշատակելի է նորաթուխ փիլիսոփայության դոկտոր Երվ. Ֆրանգյանի Միխայլովսկու սոցիոլոգիային նվիրված վայրիվերո իդեալիստական մարզանքների քննադատությունը։ «Խոսքը» դադարեցվում է 1914 թ. դեկտեմբերին, ապա նորից հրապարակվում 1918/19 թթ.։

1914 թ. հունիսին ես գործուղվեցի Գերմանիա։ Օգոստոսի 1-ին բռնկած պատերազմի պատճառով, չկարողացա վերադառնալ հայրենիք և ստիպված մնացի այնտեղ։ Միայն հայ գերիների հետ հնարավորություն ստացա 1920 թ. հայրենիք վերադառնալու։ Այդ բավականաչափ երկարատև ժամանակաշրջանում Ա. Մելիքյանի և իմ կապերը միայն միջնորդաբար էին։ Նա ինձ հասցեագրած հարազատներիս նամակները թարգմանում էր գերմաներեն և ուղարկում Բեռլին, իսկ իմ պատասխանները՝ թարգմանում, հայտնում իր հարազատներին։ Այսպիսով, նա տեսնում էր լոկ իմ գիրը, իսկ ես նրանը։

1918 թ. պատերազմը Ռուսաստանի հետ ավարտված էր, Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը կնքված։ Արդեն Բեռլինում էր ՌՍՖՍՀ հանրապետության դիվանագիտական լիազոր ներկայացուցիչ՝ Ա. Ա. Յոֆֆեն։ Դիվանագիտական ներկայացուցչության առընթեր գործում էր ՌՈՍՏԱ-ն (ՌՍՖՍՀ հեռագրական գործակալությունը)։

Հուլիս ամիսն էր։ Փողոցում հանդիպեցի Մոսկովյան շրջանի իմ ընկեր Յոսիֆ Կորինեցին։ Պարզվեց, որ նա եկել է Բեռլին՝ գլխավորելու ՌՈՍՏԱ-ի գործունեությունը։ Նա առաջարկեց ինձ ՌՈՍՏԱ-ի ռուսական հաղորդումների բաժնի խմբագրի պաշտոնը և իմ համաձայնությունն ստանալով՝ ներկայացրեց ինձ Ա. Ս. Յոֆֆեին։ Ինձ նշանակեցին ռուսական բաժնի խմբագիր։ Ես պետք է ՌՍՖՍՀ Հանրապետությունից ուղիղ հեռախոսագծով ստացվող հաղորդա-

գրումները պատրաստեի Գերմանիայի ու Եվրոպայի համար, իսկ եվրոպական ու գերմանական հաղորդումները ՌՍՖՍՀ-ի համար պատրաստում էր Եվգ. Լեվի-նին, անզուգական մարդ-քաղաքացին ու բոցաշունչ հեղափոխականը, որը, դժբախտաբար, զոհ գնաց Մյունխենի ապստամբության ժամանակ՝ 1919 թ.։ ՌՈՍՏԱ-ի գլխավոր խմբագիրն էր Մայերը («Rote Fahne»-ի խմբագիր), իսկ մեր կոնսուլտանտները՝ բոցավառ հեղափոխականներ Կ. Լիբկնեխտը և Ռ. Լյուքսեմբուրգը։

Ռ. Լյուքսեմբուրգը հաճախ էր գալիս իմ առանձնասենյակը, աչքի ածում նոր ստացված հաղորդագրությունները։ Մերթընդմերթ հարցնում էր հայ ժողովրդի դժբախտ կացության մասին։

Մի անգամ էլ, երբ Ռ. Լյուքսեմբուրգը եկավ առանձնասենյակս, ես նրան մեկնեցի Մոսկվայից ստացված հաղորդագիրը՝ Հայաստանում ազգային խորհուրդ կազմվելու մասին, որի կազմում կար նաև Արշավիր Մելիքյանը։

— Ուրեմն Արշավիր Մելիքյանը Հայաստանո՞ւմ է և Ազգային խորհրդի անդա՞մ։ Լավ է։ Դա նշանակում է, որ հեղափոխության գործն ու ղեկը գտնվում է վստահելի ձեռքերում։

— Իսկ դուք ո՞րտեղից գիտեք Արշավիր Մելիքյանին և ի՞նչ գիտեք նրա մասին,— հարցրեցի Ռ. Լյուքսեմբուրգին։

— Ճանաչում եմ նրան Շվեյցարիայից, հանդիպումներ եմ ունեցել նաև Բեռլինում։ Ես չեմ կարող մոռանալ մի դեպք, որ տեղի ունեցավ 1906 թ. Բեռլինում։ Այդ օրը Ա. Լունաչարսկին հանդես եկավ մի դասախոսությամբ քրիստոնեության և սոցիալիզմի մասին։ Ա. Լունաչարսկին փայլուն հռետոր էր և դասախոսության տպավորություններ բավականաչափ ուժեղ էր ունկնդիրների վրա։ Դասախոսությունից հետո հանդես եկան ընդդիմախոսները՝ Ա. Բեբելը և Արշ. Մելիքյանը։ Ծերունազարդ Ա. Բեբելը լուրջ փաստարկված մի ճառ ասաց՝ հանդիսատեսով հերքելով Լունաչարսկու դրույթները և դանդաղ քայլերով գնաց իր տեղը նստեց։

Բեմ բարձրացավ Արշ. Մելիքյանը։ Փոքր-ինչ անց մի կատարյալ փոթորիկ սկսվեց բեմի վրա։ Այնքան հախուռն էր նրա հարձակումը դասախոսի վրա, այնքան հարուստ փաստարկներով և կուռ տրամաբանությամբ, որ Ավ. Լունաչարսկու դասախոսության կառուցվածքը խարխլվեց և նրա հիմքերը մեկը մյուսի ետևից փուլ եկան։ Մելիքյանի խոսքը կծու էր, հեգնական, խայթող, ոչնչացնող... Մեկ էլ լսվեց Ա. Լունաչարսկու ձայնը. «Ну, довольно, Аршавир Михайлович, сдаюсь!»

— Ա. Մելիքյանը,— շարունակեց իր խոսքը Ռ. Լյուքսեմբուրգը,— անանման հռետոր է, փայլուն բանավիճող (պոլեմիստ), խորը պատրաստված մարքսիստ, մինչև ուղն ու ծուծը համոզված ու կայուն հեղափոխական կոմունիստ է*։

---

* Ես չեմ կարող առանց վերապահության պնդել, որ իմ վերը շարադրած գրույցի անխտիր բոլոր բառերը Ռ. Լյուքսեմբուրգի արտասանած բառ ու ոճերն են։ Դա, հարկավ, հնարավոր էլ չէ, քանի որ այդ հանդիպումից անցել են ուղիղ 50 երկար ու ձիգ տարիներ՝ լի բազմազան պարագաներով և իրադարձություններով (էլ ինչեր չենք տեսել այդ ժամանակամիջոցում), իսկ մարդկային միտքը հավերժ թարմ չէ և անփոփոխ ույժ չունի, բայց մի բան ամենայն հաստատակամությամբ կարող եմ պնդել, որ հնարավոր ճշտությամբ եմ տալիս մեծատաղանդ Ռ. Լյուքսեմբուրգի մտքերն ու ընդհանրապես նրա ոճային առանձնահատկությունները։

1920 թ. մարտին արդեն Երևանում էի։ Հենց առաջին օրը Արշավիրը մեզ մոտ եկավ**։ Առաջին ողջագուրումից հետո, երբ մենք սովորական զրույցից անցանք հարց ու պատասխանի, պատմեցի նրան Ռ. Լյուքսեմբուրգի հետ վերը նկարագրածս հանդիպման մասին... Նրա երեսին տարածվեց մի լայն ժպիտ, աչքերն, ասես, խնդում էին, բայց Արշավիրն էր, ըստ իր սովորության, աշխատեց զանց անել խոսակցությունը (զարմանալի՞ համեստ մարդ էր նա), հետևյալ կատակով. «Դու հո Ռոզային ճանաչում ես. ի՞նչ է, նորությո՞ւն է քեզ համար, որ նա շատ է սիրում չափազանցնել... խոսք է, ասել է քեզ, դու էլ դեռ պատմում ես։ Ճի՞շտ, ուրեմն հիշո՞ւմ է ինձ...»։ Դարձյալ ծիծաղեց, բայց այս անգամ արդեն ձայնեղ։

Հենց նույն տարվա մարտ-ապրիլ ամիսներին ես բախտ ունեցա լսելու Արշավիր Մելիքյանի երկու քաղաքական-հասարակական ելույթ-դասախոսությունները՝ Երևանի քաղաքային ինքնավարության դահլիճում, որտեղ ներկա էին դաշնակցական կառավարության անդամներից մի քանիսը, ինչպես և բոլոր կուսակցությունների բազմաթիվ ներկայացուցիչները՝ դաշնակցությունից բռնած մինչև սոցիալ-հեղափոխականները։

Դասախոսությունների թեզերը փաստարկված էին, տրամաբանորեն զարգացված։ Դասախոսը նյութին քաջատեղյակ էր, չնայած այդտեղ վերլուծության էր ենթարկված մեծ պետությունների արտաքին քաղաքականությունը կապված նորանոր բարդ իրադրության և նրանց լարախաղաց դաշնակցականների, մենշևիկների և մուսավաթականների քաղաքական վարքագծի հետ։

Նրա բանավոր խոսքը գեղեցիկ էր՝ ոճի տեսակետից ազդեցիկ, համոզիչ ու առինքնող, ոգևորության պահերին պերճախոս, գունագեղ, իսկ բանակռվի ժամանակ նա մերթ մեղմ էր՝ փորձված մանկավարժի նման, մերթ հեգնող, ծաղր ու ծանակի ենթարկող՝ իր հակառակորդներին, մերթ էլ ջախջախող, խորտակող՝ հուժկու, կատաղի հարվածներով... Այդ պահերին, ասես, կրկնվում էին Ռ. Լյուքսեմբուրգի խոսքերը, որի մասին փոքր-ինչ առաջ պատմեցի։ Այդպես էր Ա. Մելիքյանն իր քաղաքական հակառակորդների նկատմամբ, երբ անհրաժեշտ էր իր կուսակցության քաղաքական պլատֆորմը պաշտպանել։

Այլ էր Ա. Մելիքյանն ընտանեկան հարկի տակ, հարազատների, բարեկամների ու ընկերների շրջանում։ Այստեղ նա զուսպ էր, բարի ու մեղմ որպես սիրագորով հայր, ամուսին և որդի (մորը՝ Անուշ (անունը Աննա էր), իսկ մորաքրոջը՝ Սոփո էր կանչում), կամ հավատարիմ ու անկեղծ ընկեր, բարեկամ՝ պատրաստ ամեն կերպ օգնելու նրանց։ Նրա ձայնը բարձր կհնչեր միայն ուրախ տրամադրության պահերին, կամ երեխաների հետ կատակ անելիս։

Օրվա մեծ մասը նա սուսիկ-փուսիկ նստում էր գրասեղանի առջև, գլուխը հակած ձեռքին ու կորացած գրքերի վրա, որտեղից նյութեր էր քաղում իր հետագա աշխատանքների համար։ Երբ հոգնում էր աշխատանքից, դուրս էր գալիս զբոսանքի ու քայլերն ուղղում Աստաֆյան փողոցն ի վեր, քայլում էր

---

* Մենք ապրում էինք Ամիրյան փողոցի վրա բժ. Կարապետ Խաչատրյանի տանը, իսկ Արշավիրը՝ այդ տան դիմացի հնամենի շենքում։ Այս տունը կա, լավ կլինի լուսանկարել, զի այդտեղ են երիտասարդները մարքսիզմ յուրացրել։

դանդաղ՝ մտքերի ծովն ընկած, իր արտաքինով (առյուծաբաշ, խոշոր դիմագծերով, միջահասակից բարձր, դերուկ կազմվածքով) գրավելով անցուդարձ անողների ուշադրությունը։ Հաճախ էլ նրան շրջապատում էին ծանոթներն ու ընկերները, խոսակցությունը տաքանում էր ու մեկ-մեկ էլ ծիծաղը տարածվում փողոցով մեկ, ծիծաղում էին բոլոր ընկերները։ Զրոսանքը վերջացնելով. նա տուն էր վերադառնում կազդուրված ու գոհ և նորից անցնում իր սովորական գրական աշխատանքին։